

Տևողությունը – 150 րոպե

1. Հաշվել $144 - 108 : (17 - 11) \cdot 3$ արտահայտության արժեք:
1) 18 2) 90 3) 138 4) այլ պատասխան
2. Հետևյալ թվերից ո՞րի վրա չի բաժանվում 728-ը:
1) 7 2) 28 3) 8 4) 72
3. Մարիան պահարանում ունի 3 գույգ կոշիկ: Առանց նայելու առնվազն քանի՞ հատ կոշիկ պետք է հանի նա, որպեսզի վստահ լինի, որ գոնե մեկ գույգ կոշիկ հանել է:
1) 2 2) 3 3) 4 4) 5
4. Գտնել օրինաչափությունը և լրացնել բաց թողնված թիվը. 45, 30, 18, 9, ... , 0:
1) 4 2) 6 3) 5 4) 3
5. Առաջին 50 գույգ թվերի գումարը որքանո՞վ է մեծ առաջին 50 կենս թվերի գումարից:
1) 50-ով 2) 25-ով 3) 100-ով 4) այլ պատասխան
6. Ծառատունկի ժամանակ 5-րդ դասարանցիները ուղիղ ճանապարհի երկայնքով տնկեցին որոշակի քանակությամբ ծառեր՝ միմյանցից 10մ հեռավորության վրա: Քանի՞ ծառ տնկեցին աշակերտները, եթե հայտնի է, որ առաջին և վերջին ծառերի միջև հեռավորությունը 250մ է:
1) 25 2) 26 3) 24 4) 23
7. Արմենի սլաքավոր ժամացույցը ցույց է տալիս և՛ օրը, և՛ ժամը: Փետրվարի 1-ին ժամը առավոտյան 9:00-ին Արմենը ժամացույցի բոլոր սլաքը պտտում է ժամսլաքի հակառակ ուղղությամբ ճիշտ 30 պտույտ: Ի՞նչ ամսաթիվ և ժամ ցույց կտա ժամացույցը:
1) Հունվարի 30, առավոտյան 4:00 2) Հունվարի 30, առավոտյան 3:00
3) Հունվարի 31, առավոտյան 3:00 4) Հունվարի 31, երեկոյան 4:00
8. Հայրն իր ունեցած տետրերը բաժանեց երկու որդիների միջև հետևյալ կերպ: Ավագ որդին ստացավ բոլոր տետրերի կեսը և էլի 1 տետր, իսկ կրտսերը՝ մնացածի կեսը և վերջին 2 տետր: Քանի՞ հատ տետր ստացավ ավագ որդին:
1) 10 2) 6 3) 4 4) այլ պատասխան
9. Քանի՞ հնգանիշ բնական թիվ կա, որոնց թվանշանների գումարը հավասար է 2-ի:
1) 4 2) 5 3) այդպիսի թիվ չկա 4) 3
10. Հետևյալ թվերից ո՞րը չի կարող լինել երկու հաջորդական թվերի արտադրյալի վերջին թվանշան:
1) 4 2) 0 3) 6 4) 2
11. Երիտասարդ մասնագետը 1 տարվա աշխատանքի դիմաց պետք է վարձատրվեր 2600 դոլար և մեկ մեքենա: Սակայն նա դուրս եկավ աշխատանքից 8 ամիս անց և ստացավ մեքենան և 1000 դոլար: Որքա՞ն արժեք մեքենան:
1) 2400 դոլար 2) հնարավոր չէ որոշել 3) 2000 դոլար 4) 2200 դոլար

Տևողությունը – 150 րոպե

12. Պույ-Պույ մկնիկը պետք է տեղափոխեր 15 գրամ բեռ A կետից B կետ, որոնց միջև հեռավորությունը 20մ է: Մկնիկը կարող է միանգամից բարձրացնել 3 գրամ բեռ և շարժվում է 5մ/ր արագությամբ: Նրա արագությունը չի փոխվում բեռով կամ առանց բեռի շարժվելիս: Քանի՞ րոպեում Պույ-Պույն ամբողջ բեռը կտեղափոխի A կետից B:

- 1) 25րոպե 2) 32րոպե 3) 36րոպե 4) 40րոպե

13. Սեղանին դրված են քարտեր, որոնցից 6 հատի վրա գրված է 8, իսկ մնացածի վրա գրված է 2: Խաչիկն իր մոտ վերցրեց բոլոր 8 գրած քարտերը, իսկ Վաչիկը վերցրեց 2 գրած քարտերը: Այն բանից հետո, երբ յուրաքանչյուրը հաշվեց իր մոտ եղած թվերի արտադրյալը պարզվեց, որ նրանք ստացել են միևնույն թիվը: Գտնել 2 գրված քարտերի քանակը:

- 1) 10 2) 12 3) 18 4) 24

14. Ուղղի վրա նշված են մի քանի կետեր: Արամը յուրաքանչյուր հարևան երկու կետերի միջև դրեց մեկական կետ և ստացավ ընդամենը 47 կետ: Սկզբում քանի՞ կետ էր նշված ուղղի վրա:

- 1)24 2)23 3)25 4) այլ պատասխան

15. Անահիտը հաշվեց, որ իր և իր 2 քույրերի տարիքների գումարը հավասար է 16: Որքա՞ն կլինի նրանց տարիքների գումարը 4 տարի անց:

- 1) 20 2) 24 3) 26 4) 28

16. Վազքի մրցույթին մասնակցում էին 21 աշակերտ: Մրցույթի ավարտից հետո Արսենը նկատեց, որ իրենից հետո տեղ հասած աշակերտների քանակը 3 անգամ ավելի է, քան իրենից առաջ տեղ հասածների քանակը: Ո՞ր տեղն է զբաղեցրել Արսենը:

17. Մեքենան Յրոպեում անցնում է 3կմ: Որքա՞ն հեռավորություն կանցնի մեքենան 2 ժամ 45 րոպեում:

18. Երեք հաջորդական կանգառներում ավտոբուսից իջնում է 3 ուղևոր, բարձրանում՝ 4-ը: Քանի՞ ուղևոր կար ավտոբուսում ամենասկզբում, եթե երեք կանգառներից հետո դարձավ 15 ուղևոր:

19. Քանի՞ եռանիշ թիվ կա, որոնց մեջտեղի թվանշանը 0 է:

20. Վարորդը նկատեց, որ մեքենայի անցած ճանապարհ ցույց տվող հաշվիչի վրա գրված է 15951 կմ, որը աջից և ձախից նույն կերպ է կարդացվում (սիմետրիկ թիվ): Ուղիղ երկու ժամ անց հաշվիչը կրկին սիմետրիկ թիվ ցույց տվեց: Ինչքա՞ն է մեքենայի արագությունը, եթե հայտնի է, որ մեքենան չի կարող զարգացնել 90կմ/ժ-ից բարձր արագություն: